պում են համոզուելու, որ դրանք նախապատմական դարերում են պեղուել, զարգացել եւ պահպանել են իրենց գոյութիւնը:

Ճորոխի Աւազանի շուրջ 3000 գեղերի, վտակների, առուակների, լեռների, ձորերի յատուկ անունները քննողը պիտի համոզուի, որ դրանք կրկնութիւններ են եւ 16 վտակների ափերի գաւառներում էլ դրեթէ համանում են չէներն ու լեռները: Թէեւ Իմերխեւի, Դեւիսի, Մաճիխելի, եւ Աջարայի վտակների ափերին հիմնուած չեների, լեռների անուններից շատերը վիրական չէ, ուլի, Ծղալի, ձիրի, ցիխէ, խեւի ածանցներով են, բայց անունների արմատական մասը այնքան համանման են, որ կասկած չկայ, թէ ամբողջ 16 վտակների էլ աւազաններում համանման ժողովուրդ է ապրել. միաժամանակ աստիճանաբար զարգացել, քաղաքակրթուել եւ համանման զարգացում են ունեցել, թէ պաշտամունքի եւ թէ արհեստների զարգացման ընթացքով:

Օսմանեան 400 տարուան դերիշխանութիւնը ո՛չ մի քաղաքակրթական ազդեցութիւն չի թողել Ճորոխի Աւազանի վրայ, դրանց ձեռքով միմիայն կործանուել են հին քաղաքակրթական ձեռակերտները, այն ինչ ընիկ ժողովուրդն ինքն է ներգործել այդ կառավարութեան վրայ: 3000 յատուկ անունների մէջ մի-երկու տոկոսից աւելին չեն գրաւել թրքական անունները, այն էլ